



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2020թ.

«Հայկական ժամանակ» օրաթերթի
լրագրող Աղունիկ Հովհաննիսյանին

Ձեր 06.07.2020թ. գրությանը.

Հարգելի տիկին Հովհաննիսյան

ՀՀ Լոռու մարզի Այգեհատ համայնքում բնակվող Մարիետա Շահվերդյանի ընտանիքի /կազմում՝ տղան՝ Արմենակ Շախկույան, հարսը՝ Լուսինե Մամաջանյան, թոռնուհին՝ Գոհար Վարդանյան/ վերաբերյալ տեղեկացնում եմ հետևյալը.

Այս ընտանիքը նախկինում բնակվել է Օձուն գյուղում, որտեղ Մարիետա Շահվերդյանը ամուսնացել է, ունեցել տղա և աղջիկ: Աղջկա մահից հետո նրա երեխայի՝ Գոհար Վարդանյանի /ծնվ. 2001թ./ խնամքը տիկին Մարիետան վերցրել է իր վրա: Նախորդած տարիներին, մասնավորապես՝ 2013թ. ապրիլից մինչև 2018թ. մարտը ընտանիքը ստացել է ընտանեկան նպաստ /վերջին ընտանեկան նպաստի չափը եղել է 24.000 դրամ/: Հերթական փաստազրման ժամանակ ընտանիքին առաջարկվել է ընտանիքի կազմում հաշվառել նաև հարսին՝ Լուսինե Մամաջանյանին, սակայն նրան հաշվառել են 23.01.2020թ.: Հետագայում ընտանիքը տեղափոխվել և փաստացի բնակվում է Այգեհատ գյուղում:

Նախկինում Մարիետա Շահվերդյանը վաճառել է Այգեհատ համայնքում իր ունեցած 1.7 հա սեփականաշնորհված հողակտորը: Տեղափոխվելուց հետո ընտանիքը բնակվել է Շահվերդյանների հայրական տանը, այդ ժամանակահատվածում քույրերի հետ վաճառել են ծնողների մահից հետո ժառանգված 1.7 հա հողակտորը: Ներկայումս ընտանիքը մշակում է իրենց բնակելի տան տնամերձը /վարունգ, լուլիկ, կարտոֆիլ և այլն/:

ՀՀ Լոռու մարզպետարանի առանձնացված ստորաբաժանում հանդիսացող Թումանյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունը մեր հարցման հիմքով ընտանիքին առաջարկվել է վերափաստազրվել անապահովության գնահատման համակարգում: Նորացված փաստաթղթերը ընտանիքը կներկայացնի հաջորդ շաբաթվա մեջ: Ճշտված տվյալներով ընտանիքն ունի հետևյալ պատկերը՝ Մարիետա Շահվերդյան /ծնվ. 1950թ./ - տարիքային կենսաթոշակառու՝ 39.830 դրամ կենսաթոշակով, Արմենակ

Շախկույան /ծնվ. 1976թ./ - 3-րդ խմբի հաշմանդամ՝ 26.500 դրամ կենսաթոշակով, Գոհար Վարդանյան /ծնվ. 2001թ./ - 3-րդ խմբի հաշմանդամ՝ 26.500 դրամ կենսաթոշակով /վերջինս նաև ուսանողուհի է/, առանց սոցիալական խմբի՝ հարսը՝ Լուսինե Մամաջանյան: Այս տվյալներով ընտանիքը 2020թ. օգոստոսից կստանա սոցիալական նպաստ՝ ամսական 18.000 դրամ չափով:

Այգեհատի վարչական ղեկավար Արշակ Շահվերդյանի /հեռ.՝ 093 00-64-70/ տեղեկացմամբ՝ նախկինում և հիմա էլ այս ընտանիքը մշտապես եղել է իրենց ուշադրության կենտրոնում և ընդգրկվել տարաբնույթ օգնությունների ցուցակում /վերջերս էլ ընտանիքին տրամադրվել է երկու մահճակալ, սեղան, սպասք և այլ կենցաղային իրեր, որոնք իրենք ձեռք են բերել գյուղի վերանորոգվող տներից մեկի սեփականատիրոջից/:

Իսկապես ընտանիքը սոցիալապես կարիքավոր է /ընտանիքում երկու հաշմանդամություն ունեցող անձինք են/ և համայնքը ամենօրյա ուշադրության կենտրոնում է պահում այս ընտանիքին, փորձում առավելագույնը հոգալ հոգսերը, սակայն պետք է փաստել նաև, որ օրախնդիր հացի խնդիր լուծելու ծայրահեղ վատ պայմաններում չէ, նկատի առնելով ընտանիքի յուրաքանչյուր անդամին բաժին հասնող գումարի չափը:

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՂՈՒԿԱՅԱՆ